


## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2008թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում /վերլուծություն/


2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 117790 գործարքներ, որոնց քանակը 2007թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 9.1%-ով:

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ



իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 41388 օտարման գործարքների 82.1% կազմել են առուվաճառքները,

16.8%՝ նվիրատվությունները և 1.2%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների 32.2% արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 32.6% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2007թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 3.3%-ով: 2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 10006 առուվաճառքի գործարքների 60.7% արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2007թ. նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 18.4%-ով:

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/	
	հունվար- սեպտեմբեր 2008թ.	հունվար- սեպտեմբեր 2007թ.
Կենտրոն	479800	440700
Արաբկիր	405100	354500
Քանաքեռ-Զեյթուն	305400	258200
Նոր-Նորք	271200	222300
Ավան	267600	210700
Էրեբունի	270200	219800
Շենգավիթ	278000	235000
Դավթաշեն	289400	241700
Աջափնյակ	274600	226900
Մալաթիա-Սեբաստիա	262100	214400
Նուբարաշեն	152000	122300
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>296000</b>	<b>249700</b>

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2007թ. նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ շինության շուկայական միջին գների աճը կազմել է 18.5%:

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 3776 բնակարաններ, որոնց քանակը 2007թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 16.7%-ով:

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները .

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/	
		հունվար- սեպտեմբեր 2008թ.	հունվար- սեպտեմբեր 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	127400	101000
	Ապարան	33200	28500
	Թային	42800	35500
Արարատ	Արտաշատ	97800	80400
	Մասիս	127000	89900
	Վեդի	79300	58000
	Արարատ	60900	55200
Արմավիր	Վաղարշապատ	163500	122200
	Արմավիր	118900	87800
	Մեծամոր	78700	56700
Գեղարքունիք	Սևան	89900	58900
	Գավառ	46100	34000
	Մարտունի	67100	49800
	Վարդենիս	31200	25900
	Ճամբարակ	16000	14600
Լոռի	Վանաձոր	91100	69500
	Ստեփանավան	46100	34900
	Սպիտակ	61100	44500
	Ալավերդի	30200	24800
	Տաշիր	30900	24200
	Թումանյան	5600	5400
	Շամլուղ	3200	3000
	Ախթալա	12800	11500
Կոտայք	Աբովյան	169600	139600
	Նոր Հաճն	123500	97100
	Բյուրեղավան	99700	69600
	Եղվարդ	115900	86900
	Հրազդան	66500	49000
	Ծաղկաձոր	147700	91000
	Չարենցավան	88300	58800
Շիրակ	Գյումրի	97900	67100
	Արթիկ	54500	43600
	Մարալիկ	26800	24900
Սյունիք	Գորիս	103200	69300
	Կապան	87900	63500
	Սիսիան	71400	51200
	Մեղրի	46100	37200
	Ագարակ	28900	24000
	Քաջարան	47500	31700
	Դաստակերտ	7000	6800
Վայոց Ձոր	Վայք	74200	57700
	Եղեգնաձոր	95400	71000
	Ջերմուկ	125400	103000
Տավուշ	Դիլիջան	91200	64700
	Իջևան	120400	85700
	Բերդ	38700	33400
	Նոյեմբերյան	30000	27600
	Այրում	21100	18900

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2007թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների միջին գների աճը կազմել է 32.8%:

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 4421 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 997, մյուս մարզերում միասին վերցրած՝ 3424: 2007թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 6.0%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 2.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 6.9%-ով:

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/	
	հունվար- սեպտեմբեր 2008թ.	հունվար- սեպտեմբեր 2007թ.
Կենտրոն	493900	451500
Արաբկիր	417800	363200
Քանաքեռ-Զեյթուն	314300	262200
Նորք-Մարաշ	282800	225800
Ավան	275500	214400
Էրեբունի	276200	224200
Շենգավիթ	282100	238200
Դավթաշեն	299800	246800
Աջափնյակ	283900	230900
Մալաթիա-Սեբաստիա	274800	217500
Նուբարաշեն	157200	125400
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>305300</b>	<b>254600</b>

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել են 19.9 %:

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/
--------	----------	-----------------------

		հունվար- սեպտեմբեր 2008թ.	հունվար- սեպտեմբեր 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	130900	104000
	Ապարան	36200	32400
	Թալին	46000	38300
Արարատ	Արտաշատ	102200	83300
	Մասիս	131300	93100
	Վեդի	86400	60900
	Արարատ	65400	58900
Արմավիր	Վաղարշապատ	167400	125400
	Արմավիր	122500	90400
Գեղարքունիք	Սևան	92100	61200
	Գավառ	48200	37200
	Մարտունի	71800	52700
	Վարդենիս	33600	29700
	Ճամբարակ	20100	17300
Լոռի	Վանաձոր	95600	73600
	Ստեփանավան	51100	38200
	Մալիտակ	65300	48100
	Ալավերդի	32900	28200
	Տաշիր	34500	26800
	Թումանյան	9800	8000
	Շամլուղ	6600	5300
	Ախթալա	15800	14000
Կոտայք	Աբովյան	177600	144100
	Նոր Հաճն	129000	101800
	Բյուրեղավան	102900	72200
	Եղվարդ	120500	90700
	Հրազդան	70200	52300
	Ծաղկաձոր	227000	118800
	Չարենցավան	91100	61300
Շիրակ	Գյումրի	101200	71200
	Արթիկ	57600	46000
	Մարալիկ	31000	27500
Սյունիք	Գորիս	107200	72300
	Կապան	91200	66300
	Միսիան	73800	54500
	Մեղրի	49200	39900
	Ազարակ	31900	26500
	Դաստակերտ	10200	9500
Վայոց Ձոր	Վայք	78200	60400
	Եղեգնաձոր	100200	73600
	Ջերմուկ	80200	51200
Տավուշ	Դիլիջան	97000	67800
	Իջևան	124100	88200
	Բերդ	40600	36200
	Նոյեմբերյան	35400	30400
	Այրում	22800	20100

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2007թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական

բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել են 34.7 %:

Ընդհանուր առմամբ, 2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել են 17036 միավոր /13495.20 հա/ հողեր, որից Երևանում՝ 1069 միավոր /140.46 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն օտարվել են 446 միավոր /127.75 հա/ հողեր, որից Երևանում՝ 231 միավոր /39.82 հա/: Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 7029 միավոր /12362.36 հա/, որից Երևանում՝ 45 միավոր /6.80 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 6409 միավոր /576.30 հա/, որից Երևանում՝ 671 միավոր /53.66 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 3213 միավոր /253.18 հա/, որից Երևանում՝ 331 միավոր /68.91 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 223 միավոր /150.26 հա/, որից Երևանում՝ 22 միավոր /11.09 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 137 միավոր /147.76 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 22 միավոր /5.25 հա/ ընդհանուր մակերեսով,
- տրանսպորտի օբյեկտների հողեր՝ 3 միավոր վարձակալության իրավունքի վաճառք /0.10 հա/:

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարված հողերից 15728 միավորի /12872.25 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 955 միավոր /127.14 հա/, նվիրատվության գործարքներ՝ 1183 միավոր /595.36 հա/, որից Երևանում՝ 84 միավոր /8.37 հա/ և փոխանակության գործարքներ՝ 125 միավոր /27.59 հա/, որից Երևանում՝ 30 միավոր /4.95 հա/:

Հանրապետությունում 2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2007թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 3.7%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 9.1%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ նվազել է 0.1%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 19.7%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 5558.93 հա, որից 5463.81 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 41.4%-ը կամ 6511 գործարքներ /4738.19 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 315 միավոր /63.24 հա/, իսկ 58.3%-ը կամ 9174 միավորը /8099.82 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 637 միավոր /63.34 հա/: 2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 43 գործարք /34.24 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների,

հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	19	10.87	107	12.03	189	40.35	40	6.24	3	0.22	476	34.19	118	22.69
Արագածոտն	438	1320.20	4	1.12	46	5.31	189	11.39	550	775.95	1	0.13	488	44.15	24	1.80
Արարատ	297	565.92	49	52.81	402	41.23	358	35.51	717	338.13	7	4.68	621	54.86	58	4.05
Արմավիր	182	598.53	22	7.52	32	3.08	255	6.60	936	4865.28	1	0.10	730	66.04	72	11.78
Գեղարքունիք	54	189.15	8	3.98	243	28.54	147	12.41	266	179.31	1	0.01	143	18.47	21	4.17
Լոռի	31	34.97	13	18.47	103	8.01	288	10.78	396	319.51	2	0.45	89	9.59	53	2.47
Կոտայք	553	1109.35	24	8.06	427	28.25	483	27.41	1137	639.48	3	0.32	1146	102.45	97	15.92
Շիրակ	23	19.65	16	10.58	272	12.20	203	7.10	145	255.06	2	0.17	84	7.96	31	1.11
Սյունիք	17	56.79	7	10.07	35	3.31	140	3.97	125	111.20	4	3.33	42	3.29	23	0.84
Վայոց Ձոր	105	195.88	6	0.56	110	8.59	220	4.73	66	54.24	1	0.05	62	6.29	20	4.52
Տավուշ	73	88.49	24	14.90	111	7.21	128	8.30	174	75.57	1	0.06	107	9.40	12	4.35
Ընդամենը	1773	4178.93	192	138.94	1888	157.76	2600	168.55	4552	7619.97	26	9.52	3988	356.69	529	73.70

Ստորև ներկայացվում է 2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Ուղղակի վաճառք</i>								<i>Աճուրդ վաճառք</i>									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	216	39.54	19	10.87	58	3.14	139	25.53	99	23.71	0	0.00	0	0.00	49	8.89	50	14.82
Արագածոտն	22	0.37	0	0.00	1	0.04	21	0.33	653	1337.20	436	1319.75	4	1.12	45	5.27	168	11.06
Արարատ	82	20.73	12	4.38	10	0.36	60	15.99	1023	671.73	296	562.92	37	48.42	392	40.87	298	19.52
Արմավիր	68	0.53	5	0.09	1	0.002	62	0.44	414	612.43	173	595.76	17	7.43	31	3.08	193	6.16
Գեղարքունիք	41	4.93	1	0.36	14	2.32	26	2.25	410	221.16	53	181.15	7	3.62	229	26.23	121	10.16
Լոռի	44	1.59	2	1.01	6	0.21	36	0.37	391	70.64	31	34.97	11	17.46	97	7.80	252	10.41
Կոտայք	99	6.25	7	1.40	19	0.72	73	4.13	1372	1163.72	537	1106.25	17	6.66	408	27.53	410	23.28
Շիրակ	83	3.79	3	1.26	43	1.33	37	1.20	431	45.74	23	19.65	13	9.32	229	10.87	166	5.90
Սյունիք	9	6.36	1	6.05	1	0.02	7	0.29	190	67.79	17	56.79	6	4.02	34	3.30	133	3.68
Վայոց Ձոր	17	1.85	3	0.46	0	0.00	14	1.39	424	207.92	105	195.88	3	0.10	110	8.59	206	3.35
Տավուշ	44	6.15	2	4.89	25	0.87	17	0.39	290	112.67	71	88.41	22	10.01	86	6.34	111	7.91
Ընդամենը	725	92.09	55	30.77	178	9.01	492	52.31	5697	4534.71	1742	4161.53	137	108.16	1710	148.77	2108	116.25

Հանրապետությունում 2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2007թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 1.4%-ով: Ընդ որում Երևանում նվազել է 25.6%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել է 0.9%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 21.5%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ աճել է 26.1%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ աճել է 3.1%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 44.2%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (մասկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	367	968.40	33.9	5500.0	204.8	388	359.00	362.2	12000.0	3276.7
Ապարան	2	0.86	42.5	3573.3	1807.9	39	34.66	86.5	2727.3	425.5
Թալին	67	350.49	32.0	625.6	96.3	90	333.39	90.6	5494.5	453.7
Ծաղկահովիտ						26	29.88	77.0	1000.0	193.1
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	83	154.48	21.2	2332.3	647.9	316	126.18	335.1	10833.3	1727.7
Մասիս	114	190.54	27.2	2904.0	542.8	172	95.97	181.1	11904.8	2182.9
Վեդի	99	217.90	24.7	9364.6	480.4	223	113.49	203.8	10795.1	1513.6
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	47	138.65	30.5	3181.8	403.0	318	324.74	294.3	9090.0	1087.2
Բաղրամյան	72	338.03	33.8	802.5	72.0	149	4178.72	90.6	2561.1	641.9
Վաղարշապատ	54	119.08	30.0	3610.0	913.6	439	344.76	443.7	11764.7	1956.3
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						106	34.39	190.2	1875.0	409.8
Ճամբարակ	20	20.01	99.3	3475.7	858.8	89	48.17	45.3	953.3	175.2
Մարտունի	1	0.10	1126.0	1126.0	1126.0	20	6.32	45.3	2850.0	501.2
Սևան	7	12.33	218.3	1221.0	615.7	3	1.29	45.3	2134.8	209.9
Վարդենիս	25	148.71	66.0	2541.0	554.4	48	89.14	27.2	2575.1	289.1
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի	7	10.39	130.7	1155.0	435.9	154	75.58	163.0	6424.2	1143.1
Գուգարք	12	4.10	90.6	1125.0	462.7	36	17.50	226.4	6065.9	983.4
Սպիտակ	5	4.09	229.0	271.9	248.2	19	6.49	226.4	5555.5	545.1
Ստեփանավան	7	16.39	160.1	1233.2	405.5	76	64.74	90.6	2257.5	401.9
Տաշիր						111	155.20	45.3	1384.4	217.6
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	258	535.10	33.9	2418.6	329.0	498	251.94	271.7	11942.7	3976.8
Եղվարդ	216	497.38	34.8	2950.8	299.4	520	286.28	172.1	11971.8	2789.2
Հրազդան	63	73.77	39.2	8060.8	472.0	103	83.76	113.2	10256.4	1124.8
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	11	7.83	105.0	792.0	280.1	66	58.62	249.0	1693.1	478.7
Ամասիա	2	7.48	68.4	223.2	145.8	18	112.00	36.2	261.0	121.6



Անի						38	45.82	108.7	546.9	270.7
Աշոցք	2	2.24	304.0	313.0	308.5	6	10.99	45.3	215.8	119.3
Արթիկ	8	2.09	105.0	691.1	298.3	16	21.81	63.4	1428.6	185.6
Սյունիքի մարզ										
Գորիս	2	2.92	1073.1	1080.0	1076.6	51	51.17	90.6	1023.2	381.8
Կապան	10	44.67	180.0	1135.8	528.4	13	15.32	54.3	841.6	246.4
Մեղրի	1	0.51	138.6	138.6	138.6	26	4.50	181.1	3000.0	540.4
Միսիան	4	8.69	247.2	1008.7	608.5	34	40.20	45.3	1977.4	266.1
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	72	83.44	33.3	1966.5	280.6	35	32.43	117.7	10000.0	1353.3
Վայք	33	112.45	33.7	240.0	83.8	31	21.81	54.3	1430.7	523.9
Տավուշի մարզ										
Բերդ	26	15.58	147.1	5250.0	604.9	51	13.77	45.3	3783.8	395.1
Իջևան	41	64.34	45.8	9200.0	1066.0	38	23.46	240.0	9454.5	870.8
Նոյեմբերյան	4	8.50	525.0	735.0	695.0	85	38.34	45.3	7368.4	597.7

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	20	25025.0	172.2	2517.8	952.3	455	384899.0	113.2	22200.0	2525.8
Ապարան	15	14652.0	115.0	127.2	122.7	16	21220.0	113.2	632.1	213.0
Թալին	2	3405.0	81.8	121.9	101.9	10	19757.0	45.3	1454.8	106.9
Ծաղկահովիտ	8	9600.0	70.8	70.8	70.8	7	15642.0	45.3	361.2	72.4
Արարատի մարզ										
Արտաշատ	216	234142.9	115.2	820.0	282.7	137	135895.3	135.8	7140.3	923.0
Մապիս	142	148162.0	266.7	1817.2	998.2	344	272612.0	135.8	25000.0	1208.2
Վեդի	34	26356.0	165.6	1088.9	315.9	138	138820.0	113.2	5000.0	674.2
Արմավիրի մարզ										
Արմավիր	18	20414.0	114.1	1004.9	465.3	224	213514.0	131.6	9090.9	1203.7
Բաղրամյան						6	6630.0	81.5	833.3	145.4
Վաղարշապատ	13	10389.0	277.2	4697.4	1999.7	496	436143.0	135.8	26528.4	1539.4
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	7	6635.0	110.2	2762.7	996.0	35	38660.0	135.8	1084.3	381.1
Ճամբարակ						6	11955.0	45.3	2286.2	104.0
Մարտունի	110	73960.0	37.5	118.7	108.7	60	72866.0	90.6	5000.0	268.5
Սևան	91	154659.0	188.1	1140.6	402.5	28	37850.0	90.6	3110.4	172.6
Վարդենիս	21	26997.0	31.7	378.4	262.8	14	23397.0	45.3	987.2	124.7
Լոռու մարզ										
Ալավերդի						13	11761.0	67.9	1388.9	142.7
Գուգարք	72	49976.0	32.4	7219.0	2466.0	41	42308.0	67.9	14083.3	592.3
Սյիտակ						19	19810.0	63.4	1348.3	140.7
Ստեփանավան	25	28035.0	57.5	412.4	225.3	9	15120.0	45.3	1666.7	114.6

Տաշիր						4	4133.0	45.3	400.0	69.7
Կոտայքի մարզ										
Աբովյան	292	171487.0	270.0	4998.0	1539.6	522	457942.0	135.8	35353.5	2004.3
Եղվարդ	64	47897.0	845.2	4080.0	2044.1	536	481018.8	135.8	27000.0	2147.5
Հրազդան	52	55924.0	119.4	3234.0	573.8	85	81907.0	117.7	34848.5	1338.7
Շիրակի մարզ										
Ախուրյան	174	80385.7	70.0	116666.7	2543.4	46	35114.6	113.2	18750.0	331.8
Ամասիա						2	8600.0	45.3	274.7	69.8
Անի	2	1828.0	225.0	225.0	225.0	3	3314.0	67.9	180.6	99.3
Աշոցք						1	1490.0	40.8	144.0	58.1
Արթիկ	53	26491.0	52.5	2100.0	299.4	31	29729.0	67.9	5000.0	183.8
Սյունիքի մարզ										
Գորիս	4	5000.0	152.0	178.6	169.8	17	12784.0	67.9	1700.0	251.4
Կապան	21	23523.0	34.0	909.5	221.6	7	4049.1	67.9	2638.9	210.5
Մեղրի	9	4431.0	250.0	311.1	283.9	8	6133.0	67.9	632.9	130.4
Սիսիան						8	8457.0	67.9	875.0	147.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	50	41655.0	127.7	773.3	647.3	40	45489.0	67.9	7659.6	318.4
Վայք	60	44250.0	126.0	1323.0	872.5	18	14174.0	77.0	1448.3	122.9
Տավուշի մարզ										
Բերդ						4	2475.0	45.3	810.0	88.2
Իջևան	85	63365.0	50.8	2518.4	1303.3	92	80523.0	67.9	14423.1	453.1
Նոյեմբերյան	1	70.0	446.6	446.6	446.6	11	10990.0	45.3	1948.1	143.2

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 34 գործարքներ 21.84 հա մակերեսով, ընդ որում 1-ը՝ /0.08 հա/ Երևանում, 6-ը՝ /0.38 հա/ Արագածոտնի, 8-ը՝ Լոռու /1.38 հա/, 1-ը՝ /0.07 հա/ Վայոց Ձորի, 12-ը՝ /18.63 հա/ Շիրակի և 2-ական՝ /0.18 հա/ Արարատի, /1.00 հա/ Արմավիրի, /0.12 հա/ Գեղարքունիք մարզերում:

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 8695 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.4%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 41.5% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2007թ. նույն ժամանակահատվածի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 17.1%-ով:

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 496 բնակարանների, 368 անհատական բնակելի տների, 3360 հասարակական, 448 արտադրական նշանակության օբյեկտների, 3878 միավոր /33794.04 հա/ հողերի, 139 ավտոտնակների և 6 այգետնակի վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 286 վարձակալության գործարքների, այդ թվում 85 միավոր /2.89 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2007թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 33.0%-ով:

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալված 33794.04 հա հողերից 52.56 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 33741.48 հա հողերի 180.85 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 12.51 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված ենթերգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել

Սյունիքի մարզում՝ 15748.35 հա, որից 7668.08 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 9791.72 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	9	938.94	204	844.45
Արարատ	27	5856.98	145	709.92
Արմավիր	0	0.00	104	538.76
Գեղարքունիք	17	753.40	244	941.19
Լոռի	9	176.00	147	560.62
Կոտայք	9	814.30	93	701.51
Շիրակ	7	500.60	361	937.69
Սյունիք	5	749.30	306	6918.78
Վայոց Ձոր	5	2.20	56	1551.37
Տավուշ	0	0.00	24	34.91
<b>Ընդամենը</b>	<b>88</b>	<b>9791.72</b>	<b>1684</b>	<b>13739.20</b>

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 20402 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 17.3%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 16.8%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /46.9%/, հասարակական նշանակության օբյեկտների /9.5%/, առանձնատների /27.2%/ և հողերի /12.6%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 7970 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսների համեմատ աճել են 13.9%-ով:

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 2074 գործարքներ, որից 1338-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 67.8%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 23.2%-ն՝ անհատական բնակելի տների, 4.1%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.4%-ն՝ արտադրական նշանակության օբյեկտների, 1.4%-ն՝ ամառանոցների, 0.7%-ն՝ ավտոտնակների և 2.3%-ը՝ հողերի նկատմամբ:

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրվել են 4853.16 հա մակերեսով հողեր, որից 62.55 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 95.8% կամ 4651.36 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 2.17 հա: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Արմավիրի մարզում՝ 2683.73 հա, որից 2678.96 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների

ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 43 և 34 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին 2007թ. նույն ժամանակահատվածի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 11.5%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /24.7%:

2008թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 19503 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքների, որոնց քանակը 2007թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 8.6%-ով:

Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.6%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /31.6%:

### ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***